


# ՊՈԼԵՏԵԻԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

## ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷջ



ԱԹԱՎԱՐՆ, ԶԻՆՈՎՅԵՎ, ԳԱՐԱԽԱՆ  
ԿԱՇԽԱՏԻՆ և ԶԻՆՈՎՅԱՆ

ԹԵՂԵՐԸ կը շարժէ. և չինացի պուպրիկ-  
ներով՝ իր ամինակալ և ծածկեալ կամբին  
համեմատ պարել կու տայ:

Գաճրու 11 Յունաքր  
Օդայի բարբեր:

Նա Պուփարինի աչցի լոյսն է, ինչպէս  
Փարախան՝ Աթալինի, և երկուցն ալ բա-  
րեկամենք թրոցքիի:

II Popolo d'Italia (Խոտալական Ժո-  
ռովուրդը) Մուսօլինի պաշտօնաթերթը,  
և հետեարար էապէս ֆաշիստական լրագի-  
րը, Փետր. 7/ն կը հրատարակէր շարք մը  
երեք յօդուածներու Մայրագոյն Արևելքի  
վրայ, Անտառակոյս Միջազգային մեծ կա-  
րեռութիւն ունին անոնց, սակայն ինչ որ  
զմեզ Հայերս կը հետացըրը՛ Գարախանի  
կատարած հսկայ գործունէութիւնն է, իր  
ցեղային հանճարեն հոգին և նրամտու-  
թիմը, զորս Գանթոնի թղթակիցը լայն  
էջերով կը դրուատէ:

Պորոտին, բարձրահասակ է և նիհար,  
մաշած, կարծես թշբախտաւոր մը այնցան  
հրեծած մարմնով, խոռոչացած ակնակա-  
պիճներով, կապուտացած այտերով, խու-  
սափուկ և թացիկ նայուածքով:

Իր պաշտօնավարութիւնը անպաճոյն  
սենեակի մը մէջ կը կատարէ, ինչպէս վա-  
յել է ծողովդական ներկայացուցչին:

Վլատիմիր Լէնինի և Ուս. Սուն-Եաթ-  
Ունի պատկեները սենեակին թերափ-  
ներն են,

Գրասենականին ետևէն դռնակ մը կ'առաջ-  
նորդէ Փոխ-Հիպատին անձնական աշխա-  
տանոցը, կահաւորուած մեղկ ճոխութեամբ  
Ես, իրք «Ֆաշիսր» լրազրի թղթակից,  
պաշտօնական պատիւ կը վայելմ հասա-  
րակաց պաշտօնարանին մէջ, և զինետան  
աթոռի մը, մինչ Զիու-Ֆո Բէքինի «Զի-  
ՆԿԱՆ ԹԱՑՑԱ» թղթակիցը, սովորաբար  
անոր անձնական զրասենեակը կ'ընդունուի.

Ինձ նկարագրեց պերճափայլ ճոխութիւնը,  
հիացած՝ անզիփական լայն բազկաթոռնե-  
րու վրայ, որոնց վրայ Պորոտին փոած  
է չինական հին կերպաներ, փոխանակ

\*

Պորոտին, Մուկուայի զլիսաւոր զործա-  
վարը Գանթոնի մէջ, և լինտէ, Գրացինացի  
ու Քրաքովէցը, Առվիէներու Զինաս-  
տանի հսկայ ճարտարագէտին՝ Գարախանի  
Ապայակոյտին մաս կը կազմին:

Անտառակոյս Գանթոնի կարեւորագոյն  
անձը Պորոտինն է: Նա վարագոյրի տակ  
ծածկուած՝ կը թողու որ Զին մեծա-  
մասնականներու զլիսաւորները և փու-  
Մինկ՝ թանկ կուսակցութեան պետերը  
յագեցնեն իրենց հպարտութիւն՝ բարձր  
աթոռներ գրաւելով Հասարակապետու-  
թեան մէջ: Ասկայն Պորոտին է որ Փիանկ՝  
ինուատ պաշտօնատեղին յեղափոխութեան

կաշիէ ծածկոցներու՝ որոնք խոտոր են իր գրասեղանին և այլ ոսկեթուագ կահՀարասիներուն, ով գտէ կայսերական որ մանտարինի մը տնական զարդերուն:

Պորտուին, իր անստգիւտ վայելչութեամբ, ազնուապետական է ինչպէս Զիշերին: Ջղային և նուրբ ձեռքերը իր ազնուական ծագումը կը մատնեն: Ճըկոյթին անցուցած է ոսկի մատանի մը՝ քանդակուած անդամանդեայ երկու վիշապիկներով, որոնց խոշոր սուսակ մը կը խածնեն, նշան գեղարուեստական անսովոր ճաշակի մը: Զգիտուեմ որպիսի մէկ կանացի բան մը կայ Պորտուինի խոշորութեան մէջ, որ զմարդ կը պարուրէ: և մինենյն ժամանակ կ'ուժանէ:

Պ. Պորտուինի հետ ունեցած տեսակցութիւնն պատշաճական քանի մը ճապաղ և անկապ խօսքերով եղաւ, և իր կտրուկ ու վերջնական յայտարարութեամբ, թէ ինքը լույ ընկերական հարցերով և տնտեսական յարաբերութիւններով կը զբաղի իմ, հակառակ արտայայտուելում՝ զիս արձակեց, կէտ առ կէտ այս բառերն ըսելով: «Ենք ոչ Անդրիացի և ոչ Ամերիկացի ենք, ինչ եկած ենք չինական մեծամասնականներով զրադելու համար, որ միջազգային խորհրդայիններուն մաս կը կազմեն: Եթէ կ'ուղէց գիտնալ թէ երրուպացի զրամատէրներէն ինչ վարժունք կը գտնեն զեղին գործաւորները, ձեր արամադրութեանն եմ: Ուրիշ ոչինչ գիտեմ, և ոչ ինչ զի՞ կը շահազրուէ»:

Գանթոնի մեւս գործակատարի յայտարարութիւնը ուզեցի յատկապէս նշանակել, որովհետեւ զա է որ Մոսկուայի ի Զինատան կատարած հրէշային գործունէութեան կնիքը կու տայ, գործունէութիւն մը հակերուպական, հականդղիական, հակացրիատոննեայ, զուտ բաղացական բնոյթով, զօղարկուած ընկերական և մարդասիրական դիմակով:

Առերևոյթ կերպով ուսւական տարփողումը կախուած է Գ. Միջազգայնականն, ընկերական և պոլշկիկ վարդապետութիւններու ծաւալումին համար: Եւ յիրաւ

հասարակութեան համար եղած պաշտօնական յայտարարութիւնները, Քամենէֆի և Զինովիէֆի ստորագրութիւնները կը կըն: Գործնականին մէջ ուսւական մաքենան «Ալովիէթ կեդրոնական Գործադիր Միութիւն» էն կը կախուի Գարախաննեանի միջոցով, այսինքն է ուղղակի Մոսկուայէն:

Գարախան Մոսկուայի Մայրագոյն Արևելքի Դեսպանական, եթէ չեմ սխալիր, Սթալինեան նժարի կողմ կը Հակի: Անցեալ Անվանմբերին յայտնապէս հակառակ արտայայտուեցա Զինովիէֆի հետ, ճիշտ Գ. Միջազգայն-ի գործունէութեան մասին ի Հարաւային Զինատան, ուր յեղափոխութիւնը Գանթոնի, Շիռլոնի և Պաթափայի մեծ սեղանաւորներու ամակցութիւնը կրտնցնելու ճգնաժամին մէջ էր:

Պան - Մոնի սպանալիքի վրայ, զցելու ամբողջ Գանթոնի զրամատանց գոնակները, Գարախան ստիպուեցաւ Մոսկուա մեկնի: Հոն բաւական տար վէճներ ունեցաւ Եւյնանի, Պորտանովի և Թումանովի՝ այն ժամանակի աէրութեան Դրամատան տեսչին հետ:

Վայրիկան մը մտածուեցա Գարախանի փոփոխութեան, խնդիրը «կեդրոնական Միութեան» հանեցին Վորոբիլով գործավոր վճռապէս ընդդիմացաւ Զինովիէֆի և Գարախան յաղթական գորս եկաւ, ամէն ճակատի վրայ:

Իր Մոսկուա այցելութեան հետևանցով Գարախանի իրաւասութիւնները յայտնապէս ընդարձակուած են. ինքը թէպէտ նուիրապետական կարգով միշտ Մոսկուայի զիւանազիտական ներկայացուցիչ մ'է ի Բէքին, գործնականին մէջ սակայն Ասեական գործեռու ենթացարտուղար մ'է Ցէրութեան: Եւ իրու այդ ուղղակի կը գործակցի Թորիոյի, Բէքինի, Գանթոնի, Զանկ-Յոյ-Լինի, Թիպէթի, և Մոնղոլներու հետ, նոյնպէս Հնդկաստանի և Հընդկաշինի յեղափոխականներու հետ, և նոյն ինցն Աղրայի Մուսլիման կառավարչատան հետ: Խոր զիմանց կլիմական կամքակիցներէն մին կը նստի Գապուլի մէջ և էմիրին յայտնապէս մտերիմ է:

Հայ, օժտուած իր ցեղին բոլոր նրուութիւններով՝ քաղաքագէտ և տնտեսագէտ, դիւանագէտ և բազմագործ մարդ. անտարակոյս Գարախան ուսւած յեղափոխութեան գերագոյն ուղղեղներէն մին է:

Թիերևս լորս Քըրզըն՝ Գարախանի պատրաստած ասիական տհանութիւններուն համար էր՝ որ իր ժամանակէն քանի մը տարի առաջ մեռաւ, իրրե անձ կը յիշեցնէ Ալբ բէրսի Քորսը, այն տարրերութեամբ՝ որ Գարախան չատ աւելի ծերրազատ է և աւելի խոր ծանօթութիւն ունի Ալբելթի:

Ենած ի կովկաս, դիւանագէտներու և զօրավարներու բոյնին մէջ, ուր հին ձարական կառավարութիւնը իր լաւագոյն մարդերը քնտուելու կ'երթար, որդի իրուսահայու և Պարսկահայ կնոշ, երկար ատեն ապրած է ի կ. Պոլիս և ի Շանկհայ: Գարախան անսխալ կերպով ասիական ութեզու կը խօսի, և խորապէս կը ճանչնայ այդ ցեղերուն հոգերանութիւնը: Խնչպէս բոլոր կովկասցիները՝ ինըն ալ լիզուներու մեծ զիւրութիւն մ'ունի, քանի ամսուան շրջանին սորված է մեղինի շնարէն բարրագը, կը խօսի ու կը զրէ:

Անոնց որ իր հետ ծանօթութիւն ունեցած են, նախ քան Ասիոյ ուստական վարչութեան զլուխ անցնիլը, զայն իրրե արտաքոյ կարգի հանճարով մարդ կը նկարագրէն, պոլչեւիկ՝ շահախնդրական պարզ հաշիներով, երդուեալ թշնամի Եւրոպայի, փառաւէր, ծնեալ դիւանագէտ, նուրբ, և համբերող, ճարտար մեցնայութիւններ սարրող, անիիղզ, մեղկ, հեշտասէր, բայց շրջանայեաց զգայակիրութեան մէջ ալ, մին այն խարտոցներէն՝ որ խուլօրէն մթութեան մէջ կը լիզն ու լեռներ կը տապալեն:

Գարախանեան, Զինաստանի պոլչեւիկան զործունէութեան հիմնական պայքարի մը տիրապեսող նկարագիրը դրոշմած է, պայքար մը ընդհանրապէս Եւրոպայի դէմ և մասնաւորապէս Մեծն թրիտանիոյ:

Գարախանէն առաջ Մայրագոյն Ալբելթի

ուսւական տարփողումը, յեղափոխական նութեան զերակշխ դիրքն ունէր, և յանախ Այուն-Եսթ-Ալէնի ընդարձակ ծրագիրները Զինովիէֆի յեղափոխական զործունէութեամբ կը խառնակուէին: Գարախան ըմբռնեց թէ Պոլչեւիկ-Ընկերվարական հիմով յեղափոխութիւնը շնուր կամ ուշ մնան: Կութեան դատապարտուած էր թէ ի Հընդկաստան և թէ ի Զինաստան: Հնդկաստանի մէջ՝ որովհետեւ հակունեայ է Քանտիի բարյական իմաստափարութիւններուն, Զինաստանի մէջ՝ որովհետեւ միշին Զինաստանի բնիկներու Նկարագրին հակառակ էր, որոնց նուրուած տուրեալի՝ կը սիրեն պերճութիւնը, բացարձակ ազատութիւնը, և փառը:

Երբ Գարախան ստանձնեց Ռուսիոյ չինական քաղաքականութեան զեկավարութիւնը, համամիտ Զիշերինի, որուն անձնական բարեկամն է, պոլչեւիկեան յեղափոխական տարփողումը քանի մը կը զիգիացեալ ակութեներու շուրջ միայն խըմբուցեաւ, ի Զինաստան և ի Հնդկաչին, ինչպէս Գանմիռն, Շանկհայ, Հռն-Նաւ, Թաո-Չէ, Նինկ-Բոյ, Ֆու-Չէու-Ցու, և այլն:

Հոն՝ ուր եւրոպական դրամազլուխը աւելի խիստ գործարաններ և գործառնութիւններ ունի, զուտ յեղափոխական զանգուածը կուրօրէն կը հնազանդի տեղական ուազմափոխական մարմաշներու և Մուսկուայի քաղաքագիտական ներքին թագուն շահերուն:

Մուսկուայի իրական գործունէութիւնը էապէս դիւանագիտական է, ճարական, կայսերապաշտ, քաղաքային-անտեսական, հակեւրոպական, հականգղիական և ինչ ինչ մասերով հականարոնական:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԿԵՐՊՈՆՆԵՐԸ

Գարախանի մէկ ուրիշ արժանիքն ալ ուսւ Մայր-Ալբելթի քաղաքականութեան ամուր միացութեան է՝ ուսւ-իսլամական քաղաքականութեան հետ: Անգղիա անո՞ր պէտք է վերագրէ այն Միւլիլիւման երրեակ

դաշնակցութիւնը ընդ մէջ թուրքիոյ, Պարսկաց և Աֆղանիստանի. ինչ որ թրիտանիոյ ամենէն աւելի սպառնալից կորիզն է իր ասիական սահմաններուն վրայ, կամ գէթ այնպէս էր մինչև վերջիրս, այժմ առան ալ մարգելլը հաշիւներ ունի Պարսկից Պահակիկ շահին հետ և Անգղոյո՛ թիենց ամենի մէջ սարքած դարձաներուն դէմ:

Նորէն իրեն կը պարոր Անգղիան Հոնքունկի դէմ կատորւած շահարգելը (Boycotage), որ կիսեց կղզւոյն վաճառականութիւնը, և անգղական վաճառականութիւնը բառասուն առ հարիւրի վերածեց Մայրագոյն Ալեկելի մէջ, մասնաւանդ վերջին ժամանակին ձեռք առնուած արգելեներով:

Սովէկթ անթիւպատուոց իւր բազմակիզմանի աշխատանքը եղական կազմակերպութեան մը վրայ խարսխած է, որ մեծ մասով իր քոյարկեալ նկարագրին համար, ո է հակագէշուէ կը խուսափէ: Գարախանեանի Մուկոււայի վրայ ունեցած ազդեցութիւնը ըիչ մը իր աշխատանքի ոճէն ալ կը կախուի: Քիչ թուղթ, և շատ ճիգ: Անկարելի պիտի ըլլայ զայն վար առնել: Իւր գործունէութեան հիմը կը կազմեն երկու ինքնազուուի դիւանագիտական գործականներ, որ անկախ՝ թերինչն՝ կաշխատին, Մոնղոլիայինը և Գանթոնինը: Գարախան իւր այս երկու ներկայացուոցիներուն ընդհանուր ուղղութիւնը կոտայ, ազատ թողլով գործելու ուղածնուն պէս: Ամենահանճարեղ հնարք մ'է որ գործական կերպով Ռուսիոյ երեց ներկայացուցիչ կոտայ: Զինաստանի մէջ: Մին ի Մոնղոլիա՝ Զինաց հրամայային գործերուն համար, մին ի Գանթոն՝ հարաւային Զինաց յեղափոխութեան համար, և երրորդ մը ի թերին՝ թէ հսկելու համար մայրաբաղարին բաղացական շարժումնե-

րուն, և թէ հակակշուելու թիւն-Յինի գործունէութեան, այս ինքն եւրոպական և ամերիկեան դեսպանութեանց վրայ:

Այս դիւանագիտական երեց կայանաներու շնորհիւ Ծուսիա երկու տեսակ առաւելութիւն ունի. 1. արագօրէն յալթահարել մեծ պետութիւնները ամէն որշուղութեանց մէջ Զ. Կրնայ երեց տեղական տարրեր բաղարկանութիւններ մշակել և յանախ ուղղակի իրարու հակասական, որոնց անսահման հեռաւորութեանց պատճառաւ դիւրաւ կ'անտեսուին շիներու հա. սարակաց կարծիքն, մինչդեռ մի առ մի կը զեանուուին տեղական կարծիքն իրենց մասնական դիւման մէջ: Ծուսիա ուղղուղղական է՛ թէ հրամակի, թէ հարաւակի և թէ թերինի մէջ: հակառակ որ Գանթոնի մէջ հարաւակ հրամակին դէմ կը պաշտպանէ: Մոնղոլիոյ մէջ հրամակն հարաւակի դէմ և ի թերին ողօշակը փշող քամիլին կը դարձէ: Հետևարար եթէ կարելի է ըսել որ Ծուսական դիւանագիտութիւնը թերինի մէջ մեծ պետութեանց հաւասար է: սակայն ամենորոշ կերպով զերազանց է հրամային զաւառներու և հարաւային Հասարակապետութեան մէջ: Ծուսի իրականին մէջ մեծ պետութիւնները բացարձակ ցածրութեան մէջ կը թան հանդէպ թուսիոյ:

Հրամական կանոնի մը լրագիրներ կարող են խօսիլ ամերիկեան գերակշիռ ազգեցութեան մը, կամ թողիոյի և վաշինգտոնի համաձայու գործակցութեան մը վրայ: Դրապէս այս վայրկեանիս Զինաստանի մէջ: Ծուսի առաջականութեան մէջ մէջ ոչ ոք կը հրամայէ: եթէ կայ մէկը որ կը հրամայէ՝ զա անտարակոյս գարախան է:

(Տարայարելի) Թրգմ. Հ. Վ. Յովաննեսիս